

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. հոկտեմբերի 30-ի նիստի

(արձ. N4)

1. ԵԹԿՊԻ-ի մեթոդական խորհրդի կանոնակարգի 2.2 կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2 Ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմի մեջ մտնում են՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխատանքների գծով պրոռեկտորը, իրավախորհրդատուն, որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, ուսումնական գործընթացի համակարգման բաժնի պետը, ղեկանները, գիտական քարտուղարը, ՈւԽ նախագահը: Անհրաժեշտության դեպքում խորհրդի աշխատանքների մեջ կարող են ներգրավվել նաև հրավիրված անձինք»:

2. Արձանագրել, որ ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրենի ընտրության նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

2.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

2.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Սոֆիյա Վլադիմիրի Սողոմոնյանը ձայների մեծամասնությամբ (25 կողմ, 2 դեմ) ընտրվել է ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրենի պաշտոնում,

2.3 հիմք ընդունելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքներն, առաջարկել ռեկտորին Վանաձորի մասնաճյուղի կանոնադրության 18-րդ կետի համաձայն Սոֆիյա Վլադիմիրի Սողոմոնյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

2.4 ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղերի գծով ռեկտորի խորհրդական Հրաչյա Գասպարյանին ս.թ. նոյեմբերի 5-ից 8-ը ներառյալ գործուղել Վանաձորի մասնաճյուղ:

3. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

3.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

3.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Ջարուհի Հրաչի Ներսեսյանին ձայների մեծամասնությամբ (26 կողմ, 1 դեմ) շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈԿ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

4. ՉԺՀ-ից ժամանող հյուրերի և առաջիկայում նախատեսվող վարպետության դասերի վերաբերյալ Դ. Մուրադյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,

4.1 հանձնարարել ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին ապահովել վարպետության դասերին ուսանողների ներկայությունը և օժանդակել չինացիների կողմից դասապրոցեսների նկարահանման աշխատանքներին,

4.2 Արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնակատար ԲԳԴ Լիլիթ Սևակի Արզումանյանին հրամանագրել Գիտական խորհրդի կազմում,

4.2.1 հաշվի առնելով գիտական աստիճանը և կոչումը, Արվեստի պատմության և տեսության ամբիոնի նախկին վարիչ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանին թողնել ԳԽ համակազմում,

4.3 ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնին նոր հաստիք հատկացնելու առաջարկը մերժել՝ համարելով ոչ նպատակահարմար:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան